



*Համարը N 151-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2020.02.19/12(1567) Հոդ.151
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ փոխվարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 20.02.2020*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 13.02.2020
Ստորագրման ամսաթիվը 14.02.2020
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2020 թվականի N 151-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Օրենսդրական չափազիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը սահմանելու մասին» N 113-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

S. Ավինյան

2020 թ. փետրվարի 14
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
փետրվարի 13-ի N 151-Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 11-ի N 113-Ն որոշման

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

NN Ը/Կ	Չափման միջոցի անվանումը
1	2
1.	Էլեկտրամագնիսական և ուլտրաձայնային հոսքաչափ, ծախսաչափ
2.	Հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարք, ջրի հաշվիչ
3.	Հեղուկ նավթամթերքի հաշվիչ
4.	Բնական գազի հաշվիչ
5.	Կշեռք
6.	Ավտոմոբիլային սակաչափիչ
7.	Նավթամթերքի բաշխիչ աշտարակ
8.	Գազաբաշխիչ աշտարակ
9.	Չափման համար նախատեսված ծավալային տարա
10.	Էլեկտրական էներգիայի հաշվիչ
11.	Հոսանքի տրանսֆորմատոր
12.	Լարման տրանսֆորմատոր
13.	Հեղուկ ածխաջրածնային գազի բացթողման հաշվիչ
14.	Երկարության չափման միջոց
15.	Անալիզատոր
16.	Թրթռաչափ
17.	Պոլյարոգրաֆ, վոլտ-ամպերմետր
18.	Ռադիոմետր

19.	Տնտմետր
20.	Էլեկտրակարդիոգրաֆ
21.	Էլեկտրամիոգրաֆ
22.	Էլեկտրաէնցեֆալոգրաֆ
23.	Պուլսօքսիմետր
24.	Ուրինոմետր
25.	Սպեկտրաֆոտոմետր
26.	Լսողական առանձնահատկությունների որոշմանն ուղղված չափման միջոց
27.	Խոնավաչափ
28.	Սպեկտրաչափական սարքավորում (օպտիկական, լյումինեսցենտ, մասս, ճառագայթաբանական սարքավորումներ և այլն)
29.	Ռոտամետր
30.	Ֆոտոկլորիմետր
31.	Անեմոմետր
32.	Շաքարաչափ
33.	Սպիրտաչափ
34.	Կշռաքար, կշռաքարերի հավաքածու
35.	Համակարգչային սպիրոգրաֆ
36.	Կաթոցիկ և դոզատոր
37.	Դոզիմետր
38.	Ասպիրատոր
39.	Կարդիոմոնիտոր (հոլտեր մոնիթորինգ սարք)

40.	Հոսքաչափ
41.	Հոսանքի ուժի և լարման չափման միջոց
42.	Օդի, ջրի և հողի անալիզատորներ
43.	pH-մետր
44.	Իոնաչափ
45.	Նիտրատոմետր
46.	Պոտորաչափ
47.	Համընդհանուր շարժական համակարգի պլեհավաքներ
48.	Ալֆա - ճառագայթային աղբյուր
49.	Բետա - ճառագայթային աղբյուր
50.	Գամմա - ճառագայթային աղբյուր
51.	Հողանցման դիմադրության չափման միջոց
52.	Գեոդեզիական և տեղագրական չափման միջոցներ ու սարքեր (թեոդոլիտ, նիվիլեր, նավիգացիոն սարքեր և տախեոմետր)
53.	Ուլտրաձայնային հարթաչափ
54.	Նյութերի և իրերի ֆիզիկամեխանիկական և ֆիզիկաքիմիական բնութագրերի որոշման չափման միջոցներ և սարքեր
55.	Արագաչափ
56.	Ալկոմետր
57.	Գազի անալիզատոր
58.	Այրվող և թունավոր նյութերի տվիչ-ազդանշանիչներ
59.	Տրանսպորտային միջոցի արտաքին ադմուկի թույլատրելի մակարդակը չափող սարք
60.	Օխաչափ

61.	Լուսաթափանցելիության չափման միջոց
62.	Տրանսպորտային միջոցի արտաքին լուսային սարքերի լույսի ուժգնությունը չափող սարք
63.	Տախոգրաֆ
64.	Քրոմատոգրաֆ
65.	Խտաչափ
66.	Չափող մանրադիտակ
67.	Լյուքսմետր
68.	Էլեկտրոնային հեռաչափ
69.	Սպեկտրոմետր
70.	Պոլիմերային ծածկույթների հաստաչափ
71.	Ձողակարկին
72.	Գնդակի արագությունը չափող սարք
73.	Աղմկաչափ
74.	Ջրի մուլտիանալիզատոր
75.	Ատոմային-աբսորբցիոն սպեկտրոֆոտոմետր
76.	Կոնդուկտոմետր
77.	Ռեֆրակտոմետր
78.	Խտաչափերի լրակազմ
79.	Երկրաչափական մեծությունների չափման միջոցներ
80.	Մեխանիկական մեծությունների չափման միջոցներ
81.	Նյութերի ծախսի, հոսքի, մակարդակի և ծավալի պարամետրերի չափման միջոցներ

82.	Ճնշման և վակուումի չափման միջոցներ
83.	Ջերմաֆիզիկական մեծությունների չափման միջոցներ
84.	Ժամանակի և հաճախականության չափման միջոցներ
85.	Էլեկտրական և մագնիսական մեծությունների չափման միջոցներ
86.	Ռադիոտեխնիկական և ռադիոէլեկտրոնային չափման միջոցներ
87.	Նյութերի ֆիզիկաքիմիական բաղադրության և հատկության չափման միջոցներ
88.	Օպտիկաֆիզիկական չափման միջոցներ
89.	Ակուստիկ մեծությունների չափման միջոցներ

»:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար**

Է. Աղաջանյան